Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ. 31 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «ինֆորմատիկա» առարկայի ուսուցչի (8 ժամ) թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն՝անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. **հունվարի 4-ին՝ ժամը 12.00-ին**, ՀՀ Երևանի հ.31 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Հայկ Հովսեփյան 2, հեռ.՝ 010-42-01-50: